ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ՌՈՒԶԱՆՆԱ ՏԻԳՐԱՆԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻ

«Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված ԺԷ.00.03- «Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտությամբ արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանում կառուցված կինոթատրոնների պատմությանը՝ սկսած 19-րդ դարի վերջից մինչ արդի ժամանակաշրջանը, հայաստանյան կինոթատրոնների ինտերիեր դիզայնի վերլուծությանը: Ատենախոսության թեման արդիական է և կարևոր նշանակություն ունի կինոթատրոնների շենքերի ինտերիերների և այդ կառույցների նախագծման և զարգացման ուսումնասիրության, ոճային ձևաստեղծման խնդիրների վերլուծության և համեմատման, փաստացի վիճակի գնահատման ու առանձնահատկությունների բացահայտման տեսանկյունից:

Կինոթատրոնային շենքերի ինտերիերների և դրանց զարգացման ուսումնասիրությունը գիտահետազոտական առումով բավականին հետազոտված բնագավառներից է, սակայն կան բազմաթիվ խնդիրներ՝ ոճային, ձևաստեղծման, ինչպես նաև այլ հատկանիշների և առանձնահատկությունների վերաբերյալ, որոնք պատշաճ հետազոտության կարիք ունեն:

Ատենախոսն իր առջև նպատակ է դրել ուսումնասիրել կինոթատրոնների դահլիճների ինտերիեր դիզայնը, և այդ նպատակին հասնելու համար հեղինակի կողմից առանձնացվել և քննարկվել են մի շարք խնդիրներ՝ ուսումնասիրել Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի պատմական և տեսական բնույթի հարցերն ու տեխնոլոգիական առանձնահատկությունները՝ միջազգային օրինակների համատեքստում, կատարել Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի փաստագրավերլուծական ուսումնասիրությունը՝ համաձայն ինտերիեր դիզայնի նախագծամեթոդական սկզբունքների՝ բաժանելով այն զարգացման երեք փուլերի և ըստ ժամանակահատվածների, կատարել Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնի համեմատական վերլուծությունը՝ դիտարկելով վերջիններս միջազգային կինոթատրոնների ինտերիերների դիզայնի համատեքստում:

Ատենախոսությունում առաջին փորձն է արվել ուսումնասիրելու և վերլուծելու Հայաստանի կինոթատրոնների կարևորագույն օրինակները՝ խմբավորելով հայկական կինոթատրոններն ըստ ստեղծման ժամանակագրության, ըստ նշանակության, ըստ պահպանման վիճակի: Ուսումնասիրվել են Հայաստանի կինոթատրոնների ինտերիերների տիպաբանական, հորինվածքային, հայեցակարգային, էրգոնոմիկ, ակուստիկ զարգացման հարցերը՝ առաջնորդվելով նմանատիպ ուսումնասիրությունների միջազգային փորձով ու ձևավորված մոտեցումներով: Պարզաբանվել են ՀՀ կինոթատրոնների տեխնոլոգիական արդիականացման և զարգացման տեսլականները ինտերիերում: Հայաստանի կինոթատրոնների ինտերիերային լուծումներն ու դրանց առանձնահատկությունները համեմատվել և դիտարկվել են համաժամանակյա օտարերկրյա օրինակների հետ: Ըստ ժամանակագրական առանձնահատկությունների արժևորվել են կինոթատրոնների առավելությունները և թերությունները՝ կատարելով համալիր վերլուծություններ վերջիններիս վերաբերյալ: Ուսումնասիրության ընթացքում նորովի բացահայտվել են որոշ կինոթատրոնների վերաբերյալ փաստագրական արխիվային նյութեր, մանրամասներ, որոնք մինչև այդ գիտական հոդվածների կամ աշխատությունների տեսքով չեն ներկայացվել և վերլուծվել: Առաջին անգամ համապարփակ կերպով ուսումնասիրվել են 2012-2019թթ. ստեղծված արդի կինոթատրոնները: Այդ առումով, աշխատությունը եզակի փորձ է արդի կինոթատրոնների դիտադահլիճների ինտերիերների արդիականացման հարցը դիտարկել որպես ճարտարապետական նկարագրի եզրափակիչ կամ օժանդակ մաս:

Ինչպես նշում է հեղինակը, աշխատության մեթոդաբանական հիմքում ընկած է Հայաստանի կինոթատրոնների ինտերիերների որակական ուսումնասիրությունը, որն ընդգրկում է պատմավերլուծական, արվեստաբանական, ոճական, համեմատական, նկարագրական վերլուծությունը, ուստի աշխատանքը դիտարկվում է ոչ այնքան ճարտարապետության, որքան դիզայնի տեսակետից, որ նորարարություն կարելի է համարել և անհրաժեշտ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որտեղ հեղինակը ներկայացրել է աշխատանքի արդիականությունը, մասնավորեցրել է խնդիրները, գիտական նորույթը, մեթոդաբանությունը, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, կիրառական արժեքը: Աշխատանքը բաղկացած է չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ուսումնասիրվել են կինոթատրոնների սկզբնավորման հարցերը, զարգացման փուլերը, հայկական, խորհրդային և համաշխարհային իրականության մեջ, ինչպես նաև տիպաբանական առանձնահատկությունները:

Առաջին՝ «Ընդհանուր տեղեկատվություն Հայաստանի կինոթատրոնների և դրանց ինտերիեր դիզայնի վերաբերյալ» գլխում ամփոփված են 19-րդ դարի վերջից մինչև խորհրդային կարգերի հաստատումը կառուցված կինոթատրոնների ինտերիերի նկարագրությունները, տեղեկություններ խորհրդային կարգերի հաստատումից ի վեր կառուցված Խորհրդային Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի ձևավորման և կառուցման մանրամասների մասին:

Երկրորդ՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը մինչև 1970թ.» գլուխը նվիրված է մինչև 1970 թվականը կառուցված կինոթատրոններին: Այս ժամանակահատվածը շատ կարևոր է կինոթատրոնների նախագծման ընդհանուր սկզբունքների ձևավորման տեսանկյունից: Այդ ժամանակ աշխատած երիտասարդ ճարտարապետները (Գ.Քոչար, Տ.Երկանյան և ուրիշներ) փորձում էին նոր մեթոդներ գտնել թատերական դահլիճի և կինոդահլիճի հասկացությունների ներդրման, այդ թվում՝ ինտերիերի ձևավորման համար: Ներկայացված են իրենց ժամանակի հայտնի կինոթատրոնների օրինակներ, մասնավորապես՝ «Մոսկվա» կինոթատրոնը (ք. Երևան), «Նաիրի» կինոթատրոնը (ք. Երևան), «Հոկտեմբեր» կինոթատրոնը (ք. Գյումրի), ինչպես նաև ավելի ուշ՝ «Կոմիտաս» կինոթատրոնը (ք. Երևան), «Արագած» կինոթատրոնը (ք. Երևան):

Երրորդ՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1970 թ.-ից մինչև 1991թ.» գլխում դիտարկվում է Հայաստանի կինոթատրոնների դիզայնի զարգացման հաջորդ փուլը, մասնավորապես՝ 1970-ից մինչև 1991թ., որը հատկանշական է նրանով, որ հենց այդ ժամանակ է մոդեռնիզմի ճարտարապետական ոճը դառնում արդիական և գերիշխող ԽՍՀՄ-ում: Սա, անշուշտ, վերաբերում է հայկական կինոթատրոնների ինտերիեր դիզայնին, ինչպիսիք են «Ռոսիա» (ք.Երևան), «Գարուն» (ք. Էջմիածին, Արմավիրի մարզ) և այլն:

Վերջին՝ չորրորդ գլուխը՝ «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը 1991թ.-ից առ այսօր», նվիրված է Հայաստանի ներկառուցված կինոթատրոնների ինտերիեր դիզայնին անկախության շրջանում (1991-ից մինչ օրս), ինչպիսիք են «Կինոպարկ» (ք. Երևան), «Սինեմա Սթար» (ք. Երևան), «Քաջարան Սինեմա» (ք.

Քաջարան, Սյունիքի մարզ), «Սյունիք» (ք. Կապան, Սյունիքի մարզ):

Ատենախոսն ուսումնասիրելով ազգային ճարտարապետության և դիզայնի զարգացման անցած ուղին՝ նշել է, որ Հայաստանի կինոթատրոնների ինտերիերի առանձնահատկությունները մեծապես ձևավորվել են խորհրդային ճարտարապետության և հայկական ճարտարապետագեղարվեստական դպրոցի, հայկական ազգային ճարտարապետության և դիզայնի սկզբունքների յուրահատուկ համադրման արդյունքում: Հայկական կինոթատրոնների զարգացման առաջին փուլն ըստ էության սկսվել է 20-րդ դարի սկզբին, ինչն էլ իր հերթին ձևավորել է հանդիսատեսի նոր մշակույթ: Հայկական առաջին կինոթատրոններին վերաբերող արխիվային նյութերի հավաքագրումը բացառիկ նշանակություն ունի ոչ միայն ինտերիերի դիզայնի և ճարտարապետության ուսումնասիրության, այլև պատմական փաստերի վերականգնման և վերլուծության տեսանկյունից: Հայկական կինոթատրոնների կառուցման խորհրդային փուլն առանցքային նշանակություն ուներ հայկական կինոմշակույթի կայացման գործում:

Աշխատանքը բարձր գնահատելով հանդերձ, ունենք հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսության 1.4. «Կինոթատրոնների կառուցվածքը, տիպերը, ժամանակակից զարգացումները» ենթագլխում հեղինակը կինոթատրոնների համակարգումը շարադրել է տեքստային տարբերակով, սակայն աշխատանքը կշահեր և դասակարգումը ավելի ակնառու կլիներ, եթե նյութը ներկայացվեր նաև գծապատկերների կամ աղյուսակների տեսքով:

2. Հեղինակը ատենախոսության էջ 41-ում՝ «Ըստ ցուցադրվող ֆիլմերի կինոթատրոնները լինում են» նույն համակարգման մեջ օգտագործում է երկու տարբեր եզրույթ՝ «Առաջին խմբի են պատկանում «Մոսկվա», «Նաիրի», «Արագած», «Ռոսիա», «Հայաստան» կինոթատրոնները» և «Երկրորդ տիպին են պատկանում հիմնականում ներկառուցված, շրջանային կինոթատրոնները, ինչպիսիք են «Զվարթնոցը», «Հրազդանը», «Պիոները», «Ուսանողը», «Էրեբունին»...»: Ցանկալի կլիներ, որ աշխատանքում հստակեցվեին, «խումբ», «տիպ», «տեսակ» (էջ 35) եզրույթները:

3. Աշխատանքը շահեկան կլիներ, եթե ատենախոսության մեջ ներկայացվեին Հայաստանի բոլոր մարզկենտրոնների կինոթատրոնների ինտերիեր-դիզայնի վերլուծությունը և համեմատական բնութագրերը:

4. Ատենախոսությունում, նկատվել են տեխնիկական բնույթի և ոչ հստակ շարադասությամբ նախադասություններ և բացթողումներ:

Նշված դիտողությունները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը:

Ռուզաննա Տիգրանի Միքայելյանի «Հայաստանի կինոթատրոնների ինտերիեր դիզայնը» թեմայով ատենախոսությունն իր գիտական պատշաճ մակարդակով լիովին համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի՝ «գիտության տվյալ բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում» պայմանին, իսկ ատենախոսը միանգամայն արժանի է ԺԷ.00.03-«Կերպարվեստ, դեկորատիվ և կիրառական արվեստ, դիզայն» մասնագիտության գծով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը, ինչի համար էլ միջնորդում եմ ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի 016 մասնագիտական խորհրդի հարգարժան անդամներին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Վիգեն ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Վիգեն Ղազարյանի ստորագրությունը վավերացնում եմ՝

ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն՝
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝

Աննա ԱՍԱՏՐՅԱՆ

6 դեկտեմբերի 2023թ.